ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 6 դեկտեմբերի 2022 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ե. Խունդկարյանի
Անդամակցությամբ՝ Է. Շաթիրյանի
Ա. Վաղարշյանի

Քննության առնելով Արեգ Կյուրեղյանի, Գագիկ Եղիազարյանի, Մխիթար Ավետիսյանի, Սեդրակ Նազարյանի և Էդվարդ Գրիգորյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Արեգ Կյուրեղյանը, Գագիկ Եղիազարյանը, Մխիթար Ավետիսյանը, Սեդրակ Նազարյանը և Էդվարդ Գրիգորյանը (այսուհետ՝ դիմողներ), դիմելով Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2022 թվականի նոյեմբերի 21-ին), խնդրել են հետևյալը.

«(…) որոշել «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և

դրա 2-րդ հոդվածի 11-րդ մասի «1»-ին կետի՝ «եթե դրա դեմ չեն առարկում պատանդառ-ված և (կամ) ֆիզիկական վնաս կրած տուժողները.» ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 79-րդ, 81-րդ, 117-րդ, 162-րդ հոդվածներին համա-պատասխանության հարցը»:

2. Դիմողները նշում են, որ վիճարկվող իրավադրույթի կիրառման արդյունքում փաստացի ստեղծվել է մի իրավիճակ, երբ թիվ ԵԷԴ/0091/01/17 գործով դատարանի լիազորությունը, և, հետևաբար, պետական մարմնի իրավասությունը հանձնվել է տուժողի կարգավիճակ ունեցող անձանց: Ըստ դիմողների՝ համաներման կիրառման կամ չկիրառ-ման հարցն առկախվում է բացառապես տուժողի կամքից, և սահմանված չեն օբյեկտիվ չափանիշներ դրա արտահայտման համար: Վիճարկվող իրավադրույթը տուժողի կարգա-վիճակը դիտարկել է բավարար պայման, որի պարագայում դիմողի նկատմամբ արդարա-դատություն իրականացնելու իշխանությունը հանձնվում է տուժողին:

Դիմողները պնդում են, որ վիճարկվող իրավադրույթով տուժողին է վերապահվում նաև համաներում ընդունելու իրավունք, որը, ըստ Սահմանադրության, վերապահված է Ազգային ժողովին:

Դիմողների գնահատմամբ՝ նման կարգավորումը վերացնում է անկախ, անաչառ և միայն Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան գործող դատարանի և արդար դատաքննության իրավունքը:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատա-կան կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ **անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Վերոնշյալ նորմի հիման վրա էլ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական պահանջները: Մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության դեպքում յուրաքանչյուր ոք կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան:

Նշված հիմքերն են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ դիմողը վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, **ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝** հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և

ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում իր դիմումի հիման վրա գործի քննության արդյունքում՝ հիմնավորելով նաև իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Դիմումի ուսումնասիրությունից հետևում է, որ դիմողները, վերարտադրելով Սահմանադրության մի շարք դրույթներ, ըստ էության միայն նշում են, որ տուժողին վերապահվել են Ազգային ժողովի և դատարանի լիազորություններ, և համաներման կիրառման կամ չկիրառման հարցն առկախվում է բացառապես տուժողի կամքից, որի արտահայտման համար սահմանված չեն օբյեկտիվ չափանիշներ՝ խախտելով անկախ, անաչառ և միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան գործող դատարանի և արդար դատաքննության իրավունքը: Նշվածի հիման վրա դիմողները բարձրացնում են «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի և նշված օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետի սահմանադրականության հարց, սակայն Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթների ենթադրյալ հակասահմանադրականության, վիճարկվող իրավադրույթների հակասահմանադրականության և դիմողների իրավունքների հնարավոր խախտման միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ դիմումով չեն ներկայացվել բավարար հիմնավորումներ: Ընդ որում՝ դիմումում վկայակոչվում են նաև մի շարք սահմանադրական նորմեր, մասնավորապես՝ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 117-րդ, 162-րդ հոդվածները, որոնք նույնիսկ ներառված չեն Սահմանադրության 2-րդ գլխում, մինչդեռ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է, ի թիվս այլնի, հիմնավորի իր՝ Սահմանա-

դրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների խախտման փաստը:

Վերոնշյալի հիման վրա Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Արեգ Կյուրեղյանի, Գագիկ Եղիազարյանի, Մխիթար Ավետիսյանի, Սեդրակ Նազարյանի և Էդվարդ Գրիգորյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան

Անդամներ՝ Է. Շաթիրյան

Ա. Վաղարշյան

6 դեկտեմբերի 2022 թվականի
ՍԴԴԿՈ-68